3 մարտի 2016 թվականի N 201 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1020-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի «Զվարթնոց օդանավակայանի տարածքում գտնվող «Ա» և «Բ» բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերին բնակարաններ հատկացնելու և քանդման լիազորություններ վերապահելու մասին» N 1020-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման վերնագիրը «սեփականատերերին» բառից հետո լրացնել «և անհատույց օգտագործողին» բառերով.

2) որոշման 1-ին կետը «սեփականատերերի» բառից հետո լրացնել «և անհատույց օգտագործողի» բառերով.

3) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում «2015 թվականի» բառերը փոխարինել «2016 թվականի» բառերով.

4) որոշման 3-րդ կետը «մասնակի հատուցմամբ օտարման» բառերից հետո լրացնել «, իսկ Զվարթնոց «Բ» բազմաբնակարան շենքի N 23 բնակարանի անհատույց օգտագործողի հետ՝ որոշման հավելվածում նշված բնակարանի անհատույց օտարման» բառերով.

5) որոշման հավելվածի վերնագիրը «սեփականատերերի» բառից հետո լրացնել «և անհատույց օգտագործողի» բառերով.

6) որոշման հավելվածը 56-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 56.1-ին կետով.

«

56.1	Կուզինա Մարինա	70 07 991061, Ռուսաստանի Դաշնություն	22.01.2008 թ.	Զվարթնոց, Բ շենք, N 23	-	25.94, իսկ 31.20 ընդհանուր օգտագործման	Բաբաջան-յան փող. 98/5	N 1	47.5	03072014-01-0200	անհա-տույց

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ